



**Առաջարկությունների  
փաթեթ**

ՀՀ հարկային օրենսգրքում  
փոփոխություններ և  
լրացումներ կատարելու  
մասին

# ***Առաջարկությունների փաթեթ***

## ***Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին***

Ինչպես հայտնի է, Հարկային օրենսգրքը բիզնեսի սահմանադրությունն է և հենց հարկային քաղաքականությունն է, որ պիտի խթանի ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, կանխի գների կտրուկ բարձրացումը և բնակչության սոցիալական շերտավորման խորացումը՝ վերջնարդյունքում նպաստելով տնտեսական աճին: Հարկ վճարողների կողմից հաճախակի բարձրաձայնվող խնդիրներն ու հարկային համակարգի հանդեպ վստահության ոչ բավարար մակարդակը մեր կարծիքով կարող էին էական ազդեցություն թողնել հարկային նոր օրենսգրքի բարելավմանն ուղղված աշխատանքներին ձեռնամուխ լինելու համար:

Ուսումնասիրելով Հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը (քննարկված 15.11.2018-30.11.2018 թթ.), Գործարար շահերի պաշտպանության ցանցը իր գոհունակությունն է հայտնում կապված ընդհանուր փոփոխությունների հետ և փաստում, որ դրանցից որոշները նախանշված էին Ցանցի կողմից նախկինում մշակված դիրքորոշման փաստաթղթերում, մասնավորապես, Փոքր և միջին ձեռնարկատիրությանը վերաբերող հարկային ոլորտի օրենսդրության կատարելագործման մասով (<https://businessadvocacy.am/wp-content/uploads/2018/12/Improvement-of-tax-system.pdf>):

Ներկայացված նախագծում առկա դրույթների մասով ցանցի կողմից արված քննարկումները հանգում են հետևյալ դիտարկումներին՝

- Նախագծի Հոդված 27-ով նախատեսվում է Օրենսգրքի 150-րդ հոդվածում կատարել փոփոխություն սահմանելով եկամտային հարկի միասնական դրույքաչափ: Ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող ուղղակի հարկերի համահարթեցման համատեքստում խնդրահարույց է մինչև 150 000 ՀՀ դրամ աշխատավարձ ստացողների մոտ փոփոխության բացակայությունը՝ այն դեպքում, որ կաճեն նրանց կողմից սպառվող ակցիզային հարկով հարկման ենթակա մի շարք ապրանքների գները: Հետևաբար նշված անձանց տնօրինվող գումարների գնողունակությունը կնվազի, մինչդեռ ուղղակի հարկերի բեռը կմնա անփոփոխ: Խնդրահարույց է համարվում նաև այն փաստը, որ հարկման այլընտրանքային համակարգերում գործող ընկերությունների համար չի նախատեսվում գործուն մեխանիզմ, որի միջոցով կիրախուսվի աշխատավարձերի իրական չափով հայտարարագրումը:

➤ Շահաբաժինների հայտարարում: ՀՀ-ում գործող մի շարք ընկերություններ ըստ էության փաստացի շահույթը բաշխում են յուրաքանչյուր ամիս, ինչը պայմանավորված է սոցիալ տնտեսական իրավիճակով, ինչը նախատեսված չէ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքով: Հետևաբար փաստացի բաշխումը տեղի է ունենում այլ ժամանակահատվածում, իսկ հետագայում ապահովվում է ձևական մասը՝ հայտարարագրելով հաջորդ տարվա ընթացքում: Առաջարկվում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքում ամրագրել շահույթը յուրաքանչյուր ամիս բաշխելու գաղափարը, վերոնշյալ խնդրից խուսափելու ակնկալիքով :

➤ Նախագծի 36-րդ Հոդվածում ներկայացվում է Միկրոձեռնարկատիրության համակարգը, համաձայն որի Միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ չեն կարող համարվել հետևյալ որոշումներում գործող ընկերությունները՝ խորհրդատվական, իրավաբանական, հաշվապահական, աուդիտորական, ինժեներական, գովազդային, դիզայներական, մարկետինգային, թարգմանչական ծառայություններ, տեղեկատվության մշակման (այդ թվում՝ տեղեկատվության հավաքման ու ընդհանրացման) և փոխանցման (հաղորդման), գիտահետազոտական, փորձարարական-կոնստրուկտորական և փորձարարական-տեխնոլոգիական (տեխնոլոգիական) աշխատանքներ, ինչպես նաև սույն ենթակետում նշված ծառայություններին համանման այլ ծառայություններ մատուցողները.

*Առաջարկություն:* Ավելացնել գործունեության նոր ոլորտներ հնարավոր չարաշահումներից խուսափելու նպատակով: Օրինակ՝ կարելի է որպես սահմանափակում ավելացնել միջազգային բեռնափոխադրումները և այլ ծառայություններ:

Միաժամանակ կարելի է դիտարկել միկրոձեռներեցության ոլորտում գործունեություն ծավալող ընկերությունների կողմից դուրս գրվող հաշիվ վավերագրերով հիմնավորված ծախսերի՝ շահութահարկի հաշվարկում նվազեցումներ կատարելու որոշակի սահմանափակումների սահմանելու հնարավորությունը:

➤ Օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսվում է հաշվապահական, խորհրդատվական, իրավաբանական ծառայություններ մատուցող հարկ վճարողների գործունեությունը դուրս բերել շրջանառության հարկի ռեժիմից:

*Առաջարկություն:* Վերոնշյալ ծառայությունների սպառողների գերակշիռ մասը հանդիսանում են ֆիզիկական անձիք և ՓՄՁ ներկայացուցիչներ: Փոփոխությունը կհանգեցնի գների բարձրացմանը և մի շարք այլ բացասական արդյունքների:

Հավանական ռիսկ կարող է համարվել նաև նշված ծառայություններ մատուցող ընկերությունների ստվերային դաշտ անցնելը, գների թանգացման շղթայական էֆեկտը, նշված ոլորտների մրցակցության անկումը, մի շարք ընկերությունների գործունեության դադարեցումը:

Մեր բոլոր դիրքորոշման փաստաթղթերը կարող եք գտնել և բեռնել գործարար շահերի պաշտպանության ցանցի կայքից՝ <http://businessadvocacy.am/>

*Գործարար շահերի պաշտպանության ցանց - կազմակերպությունների և անհատների ոչ պաշտոնական միավորում է, որի նպատակն է միացյալ ուժերով նպաստել Հայաստանում սոցիալ-տնտեսական բարեփոխումների իրականացմանը և մասնավոր ձեռնարկատիրության զարգացմանը, սպահովելով գործարար հանրության և քաղաքացիական հասարակության ներգրավվածությունն ու մասնակցությունը հանրային քաղաքականության մշակման, իրականացման, վերահսկման և գնահատման գործընթացներում:*

*Ցանցի նպատակն է գործարար հանրության ձայնը հասանելի դարձնել պետական մարմիններին, հանդես գալ որպես կապող կառույց՝ ավելի արդյունավետ իրականացնելու փոքր և միջին գործարարության ոլորտի իրենց շահառուների շահերի պաշտպանությունը:*